27 ա

ՀԱՄԱՌՕՏ ՏԵՂԵԿԱԳԻՐ

ԵՒ

ՀԱՇԻՒ

ԿԱԹՈՒՂԻԿԷ Ս. ԱՍՏՒԱԾԱԾԻՆ (Ս. ԳԷՈՐԳ) ԵԿ. ԾԽ.

ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ

Երկամեայ գործունէութեան

I	II
ԵԿԵՂԵՑՈՒ	ԴՊՐՈՑԻ
1914 և 1915 թ.	$19^{13}/_{14}$ $19^{14}/_{15}$ և $19^{15}/_{16}$ թ.

ԹԻՖԼԻՍ

ՏՊԱՐԱՆ „ՄԱՄՈՒԼ" ԼՕՐԻՍ-ՄԵԼԻՔԵԱՆ ՓՈՂ., № 22.

1916

14275

2728 ա

ՀԱՄԱՌՕՏ ՏԵՂԵԿԱԳԻՐ

ԵՒ

ՀԱՇԻՒ

14275

ԿԱԹՈՂԻԿԷ Ս. ԱՍՏՒԱԾԱԾԻՆ (Ս. ԳԷՈՐԳ) ԵԿ. ԾԽ.

ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ

Երկամեայ գործունէութեան

I	II
ԵԿԵՂԵՑՈՒ	ԴՊՐՈՑԻ
1914 և 1915 թ.	$19^{13}/_{14}$ $19^{14}/_{15}$ և $19^{15}/_{16}$ թ.

և

ՆԱԽԱՀԱՇԻՒՆԵՐ

ՊԵՏ ՄԱՐԴԱՄԵՏՔ

Թ Ի Փ Լ Ի Ս

Եղբայր. տպ. «ՄԱՄՈՒԼ» ընկ., Լորիս-Մելիքեան փ. № 22.

1916

ԿԱԹՈՒՂԻԿԷ Ս. ԱՍՏՒԱԾԱԾՆԻ ԵԿ. ԾԽ. ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԸ

Անցեալ 1914 թուի մայիսի վերջերին կայացած ծխական ժողովները քննութեան առնելով հոգաբարձութեանս մի ամեայ գործունէութիւնը՝ եկեղեցու և դպրոցի կառավարութեան վերաբերմամբ՝ հաստատեցին եկեղեցու 1913 թուի և դպրոցի 1913/14 ուսմ. թուի հաշիւները և որոշ բարեփոխումներով ընդունեցին հոգաբարձութեանս ներկայացրած նախահաշիւները՝ եկեղեցու 1914 թուի և դպրոցի 1914/15 ուսմ. թուերի վերաբերեալ։

Ծխական վերջին ժողովը գաղտնի քուէարկութեամբ լրացրեց հոգաբարձութեանս կազմը՝ ընտրելով իշխան Միք. Գէորգեան Թումանեանին և Միք. Եգորեան Կամսարականին։ Յիշեալ երկու պարոնների ընտրութեամբ հոգաբարձութեանս կազմը ունեցաւ հետեւեալ անդամ.—իշխան Սարգիս Միքայէլեան Արղութեան-Երկայնաբազուկ, իշխան Միքայէլ Գէորգեան Թումանեան, Աբգար Գրիգորեան Աբուլեան, Միքայէլ Եգորեան Կամսարական և Աբգար Սարգսեան Յովհաննիսեան։

Հոգևոր իշխանութեան կողմից նորընտիր հոգաբարձունները յունիսի 2-ին հաստատուելով իրենց պաշտօնի մէջ՝ հրաւիրուեցին հոգաբարձական ժողովի։ Այդ նիստին հոգաբարձութեան նախագահ ընտրուեց իշխ. Ս. Արղութեան-Երկայնաբազուկ, գանձապահ՝ երեցփոխ Աբգար Աբուլեան։ Հոգաբարձութեան քարտուղարութիւնն ու գործավարութիւնը յանձնուեց դպրոցիս աւագ-ուսուցիչ պ. Յակ. Ալաբարին։ Նորընտիր հոգաբարձունները ծանօթացան թէ ընթացիկ գործերի և թէ առհասարակ իրենց պարտականութիւնների հետ, որից յետոյ որոշուեց ունենալ հերթապահութիւն, որով հերթապահի վրայ պարտք դրուեց բացի պաշտօնատար անձանց հսկողութիւնից, հսկել եկեղեցին ու դպրոցը իրենց հերթապահութեան մի ամսում և հոգաբարձական ժողովի նիւթ դարձնել իրենց դիտողութիւնները։

I. Եկեղեցին 1914 թին

Հոգաբարձութիւնս 1914 թւին ունեցել է 22 նիստ։ Ամեն անգամ օրակարգի խնդիրների մէջ յատուկ տեղ են բռնել Կաթուղիկէ ս. Աստուածածին եկեղեցուն վերաբերեալ զանազան խնդիրներ, օրինակ.

1. Անցեալ 1914 թւի մայիսին կայացած ծխական ժողովի ընդունած նախահաշուով՝ հոգաբարձութիւնս շտապել է եկեղեցու խոնաւութեան դէմ առնել։ Այդ առթիւ ունեցել է մի շարք խորհրդակցութիւններ և եկել է այն եզրակացութեան, որ աւելի լաւ է եկեղեցու խոնաւութեան դէմ ցամքեցուցիչ առուն շինի իր անմիջական հսկողութեամբ և աւելորդ դրամ չընտայ կապալառուին։ Եկեղեցու արևելեան և հարաւային պատերի երկարութեամբ, ճարտարապետ պ. Ն. Խարաղեանի հսկողութեամբ և կազմած նախահաշուով փորուել է առուն, որի վրայ փոխանակ ծախսուելու ըստ նախահաշուի 615 ր. 52 կոպէկ, ծախսուել է 489 ր. 64 կոպէկ։ Այսպիսով տնտեսուել է 125 ր. 88 կոպէկ նախահաշուից պակաս։ Այդ առուն ունեցաւ բարերար աղդեցութիւն և խոնաւութիւնը պակասեց։

2. Նոյն ծխական ժողովի որոշման համաձայն՝ հոգաբարձութիւնս կրկին իր անմիջական հսկողութեամբ վերանորոգել է եկեղեցու արևմտեան կողմը գտնուած եկեղեցապատկան շէնքի (դրպրոց) վերին յարկը, ուր նորոգել է ամբողջ պատշգամբի յատակը, ներկել է տուել ամբողջ պատշգամբը և շէնքի չորս սենեակների յատակներն ու պատերը ու շինել է նոր ձեւի վառարաններ։ Այդ վերանորոգութեան համար ևս հմուտ վարպետների մասնակցութեամբ նախապէս կազմել է տուել նախահաշիւ և դարձեալ տնտեսական ձեւով շինել տալով՝ ծախսել է նախահաշուից պակաս գումար։

3. Լուրջ հսկողութեան խնդիր դարձնելով Կաթուղիկէ ս. Աստուածածին եկեղեցու տօնը, որի ժամանակ եկեղեցին ունենում է զգալի արդիւնք, հոգաբարձութիւնս աշխատել է աւելի քան կանոնաւորել այդ օրերին մոմավաճառութեան և այլ եկամուտների գործը։ Տօների հսկողութիւնը՝ յանձնուել է հոգաբարձու պ. Ա. Յովհաննիսեանին և աւագ-ուսուցիչ պ. Ե. Աղալարին, որոնք և հետեւելով եկեղեցու տօներին կարողացել են աւելի շահաւէտ դարձնել եկեղեցու արդիւնքները։ Այդ տօնական ամբողջ շաբթում մուտ ծախսել է՝ 1,136 ր., ուխտաւորներից ստացել է 147 ր., մոմթիներից 40 ր։

4. Հոգաբարձութիւնս ծխական ժողովի կողմից լիազօրութիւն ունենալով բանակցութեան մէջ մտնելու երբեմնի երեցփոխ հանդուցեալ Բայեանդուրեանի ժառանգների հետ՝ եկեղեցապատկան գումարների յետ ստացման վերաբերեալ, իր մի շարք ժողովներում և թեմական առաջնորդի ու փաստաբանների հետ ունեցած մի շարք խորհրդակցութիւնների ընթացքում՝ կարողացել է յաջողեցնել վերջ ի վերջոյ հաշտութեամբ վերջացնելու երկար տարիներ տեւող դատարանական գործը, և ստանալ Կաթուղիկէ ս. Աստուածածին եկեղեցու սեփական դրամները որ մնացել էին Բայեանդուրեանի մօտ։

1914 թւի յուլիսին, Հոգաբարձութիւնս փոխադարձ զիջումով կնքում է վերջնական համաձայնութիւն Բայեանդուրեանի այրու հետ և թեմական Առաջնորդի նախագահութեամբ կայացած ժողովում ստացելով տ. Բայեանդուրեանից եկեղեցապատկան իսկական դրամագլուխը՝ դադարեցնում է դատը։ Հոգաբարձութիւնս իր պարտքն է համարում յատուկ շնորհակալութիւն յայտնել եկեղ. նախկին երեցփոխան պ. Յ. Ամիրխանեանին, որի նախաձեռնութեամբ սկսել էր այդ դատը և մինչև դատավարութեան վերջանալը՝ հետևել է գործին։ Շնորհակալութեան է արժանի նաև կոնսիստորիայի իւրիսկոնսուլտ պ. Յ. Սալէնդիարեանը, որը պ. Ամիրխանեանի հետ պաշտպանել է դատարանի առաջ եկեղեցու շահերը։

5. Ծխական ժողովում յարուցած խնդրի համաձայն՝ հոգաբարձութիւնս պարտականութիւն ստանձնելով ստուգելու նախկին երեցփոխաններից մէկի՝ պ. Յով. Առիւծեանի պաշտօնավարութեան վերաբերող գործունէութիւնը, վիճակային կոնսիստորիայից ստացաւ յիշեալ Առիւծեանի հաշիւմատեաններն իրենց բոլոր փաստաթղթերով, մի շարք ժողովներում ստուգութեան ենթարկելով այդ ամենը, վերջը, 1915 թւի փետրուարի 25-ին, հոգաբարձութեան ժողովում, որին ներկայ էր նաև պ. Յով. Առիւծեանը, համաձայնութիւն կնքուեց և պ. Առիւծեանը յանձնառու եղաւ իր բացակայութեան ընթացքում, հոգաբարձութեան անդամ պ. Գ. Լեոնեանի ժամանակաւոր պաշտօնակատարութեան ժամանակ, եկեղեցու դրամարկղից պակասող գումարը վճարել իր միջոցներից՝ որպէսզի իրենից այլևս պահանջ չը լինի։ Կաթուղիկէ ս. Աստուածածին եկեղեցուն հասանելիք 370 ռուբլու դիմաց վճարեց հաշիւներից փաստօրէն պակասող 300 ռուբլին, որի մասին և կազմուեց արձանագրութիւն։ Այս մասին Հոգաբարձութիւնս իր որոշումը յայտնեց վիճակային կոնսիստորիային ի գիտութիւն և նրա հաստատութիւնն առնելով՝ հոգաբարձութեան անդամների ստորագրութեամբ մի ստացական տուեց պ. Առիւծեանին և մայիսի 12-ին ստացաւ նրանից եկեղեցապատկան 300 ռուբլին։

6. Հոգաբարձութիւնս ամեն ջանք գործ է դրել եկեղեցու դրամները նպատակայարմար ծախսելու. այդ հանգամանքն ի նկատի առած՝ աշխատել է կողմնակի եկամուտներով աւելացնել եկեղեցու դրամը և որպէսզի դպրոցին տալիք նիւթականը ամբողջապէս չը ծանրանայ եկեղեցու վրայ, 1914/15 ուսմ. թիւին կազմակերպել է ներկայացումներ և զբօսանք։ Այսպէս օրինակ՝ 1914 թիւին «Սայեաթ-Նովայի» անուամբ Հայ Գրողների ընկերութեան անդամների աջակցութեամբ կազմել է գրական-երաժշտական երեկոյթ, որից զուտ արդիւնք ստացել է 182 ր. 20 կ.։ Դիմել է Թիֆլիսի ժողովարանին և ստացել է նպաստ 30 ռուբլի, դիմել է քաղաքային Վարկի ընկերութեանը և ստացել է 100 ռուբլի նպաստ։ 1915 թիւին ս. Սարգսի եկ. ծխ. դպրոցի հոգաբարձութեան հետ կազմակերպել է մի ներկայացում և մի զբօսանք։ Դրանցից ստացել է առաջացած զուտ արդիւնքի կէսը՝ ներկայացումից 150 ռուբլի, զբօսանքից 210 ռուբլի 90 ։ Դիմել է կրկին Թիֆլիսի Վարկային ընկերութեանը և ստացել է 100 ր. նպաստ, ընդամենը 1914 թւի յունիսից մինչև 1915 թւի մայիս ամիսը կողմնակի եկամուտ ունեցել է՝ 774 ր. 10 կոպէկ, որով թեթևացրել է եկեղեցուց ստանալիք դպրոցական ծախքը։

7. Եկեղեցի յաճախող ժամաւորներին և ուխտաւորներին հոգեկան բաւականութիւն պատճառելու և եկեղեցու ժամերգութիւնը գրաւիչ դարձնելու նպատակով՝ հոգաբարձութիւնս պահել է իր և ս. Սարգսի դպրոցի աշակերտութիւնից կազմած երգեցիկ խումբ և յատուկ խմբապետ, որպէսզի թէ տօներին և թէ կիւրակի օրերին երգեն ս. պատարագների ժամանակ։ Սակայն հոգաբարձութեանս ցանկութիւնը մինչև օրս էլ մնացել է ցանկութիւն. երգեցիկ խումբը յաճախ չի երգել պատարագներին ժամերգութեան սկսելու անորոշութեան պատճառով։

8. Եկեղեցու եկամուտների այն մասը, որ կազմւում է եկեղեցապատկան բնակարանների վարձակներից՝ հոգաբարձութեանս կողմից նոյնպէս եղել է լուրջ հսկողութեան տակ։ Պ. Երեցիոխանի տուած տեղեկութիւնների համաձայն՝ հոգաբարձութիւնս հարկաւոր դէպքում միջամտել է, որպէսզի այդ բնակարաններում ապրող կեցաւորները ժամանակին վճարեն իրենց վարձագինը։ Պէտք է նկատել, որ եկեղ. եկամուտների այդ մասը՝ կենսական սուղ պայմանների պատճառով գանձւում է շատ դանդաղ, որի դիմաց հոգաբարձութիւնս յաճախ ստիպւած է լինում ի նկատի առնել կեցաւորների յարմարութիւնը։ Սրա հետ միասին, պէտք է ասել, որ թէ անցնող տարում և թէ այս տարւան ընթացքում չէ եղել ոչ մի դէպք, որ բնակարանի վարձագին լինի կորած։

9. Ծխական ժողովի կողմից հոգաբարձութիւն ունենալով մտածելու Կաթուղիկէ ս. Աստուածածին եկեղեցու ներքին վերանորոգութիւնների մասին, գործել է այդ նպատակով ևս, օրինակ—խորհրդակցել է զանազան ձեռնհաս անձերի և ճարտարապետների հետ, ծանօթացրել է հոգաբարձութեանս ծրագրած վերաշինելի կէտերի հետ, սակայն բոլորի կողմից էլ ստացել է մի պատասխան, որ առ այժմ եկեղեցու վերաշինութեամբ չը պէտք է զբաղւել, որովհետև չափազանց թանկ են թէ գործադրելի նիւթերը և թէ աշխատող ձեռքերը։ Հոգաբարձութիւնս չը բաւականանալով այդ օրինակ գործելուց՝ դիմել է սրբազան Առաջնորդին՝ նրա կարծիքն ևս իմանալու։ Սրբազան Առաջնորդը՝ մայիսի 14-ին այցելեց մեր եկեղեցին, տեղնուտեղը ծանօթացաւ վերաշինութեան ծրագրի հետ, խոստացաւ զումարել ճարտարապետների և նկարիչների մի յատուկ խորհրդակցութիւն վերաշինութեան խնդրի համար։

10. Հոգաբարձութիւնս՝ դպրոցական գործի զեկավարութեան համար ևս ունեցել է ս. Սարգսի ծխ. հոգաբարձութեան հետ 1914—1915 ուսմ. տարւայ ընթացքում 13 նիստ, ուր բացառապէս խորհրդակցութեան նիւթ են դարձել ուսման գործի մասին եղած թէ ընթացիկ խնդիրներ և թէ աւագ-ուսուցչի զեկուցումները և թէ առհասարակ ամբողջ դպրոցական գործը։

II. Դպրոցը 1914/15 ուսմ. թւին

1914 թւի մայիսեան ծխական ժողովները քննութեան առնելով մեր և ս. Սարգսի ծխ. դպրոցի մէջ թեմական Իշխանութեան նախաձեռնութեամբ ուսումնական ներքին կապ ստեղծելու գործը՝ գտան նպատակալից մինչև նորմալ տիպի սեփական դպրոց պահելը և հաւանութիւն տալով հոգաբարձութեանս այդ օրինակ միամեայ գործունէութեանը՝ դպրոցիս ուսուցչութեան անտեսական նեղ կացութիւնը նկատի առան ուսուցչութեան կատարած դերը՝ և դասագինը բարձրացրին 35 ռուբլու։

Ա. Սկզբնաւորութիւնը.

Կաթուղիկէ ս. Աստուածածին, (ս. Գէորգ) և ս. Սարգիս եկ. ծխ. դպրոցների հոգաբարձութիւնների խառն ժողովը՝ 1914 թւի մայիսի 26-ի պաշտօնական նիստում ի նկատի առնելով իրենց ծխական համայնքների համակրութիւնը դպրոցական ներքին կապ ստեղծելու վերաբերմամբ՝ որոշեց 1914—1915 ուսումնական տարում ունենալ երկու դպրոցներում երեքական բաժանմունք հե-

տեսալ կարգով.—ս. Գէորգի դպրոցում Ա. Բ, և Գ բաժանմունքներ, իսկ ս. Սարգսի դպրոցում՝ Ա. Բ և Դ բաժանմունքներ այն հիման վրայ, որ իւրաքանչիւր դպրոցի ծախք կը հոգայ իր հոգաբարձութիւնը, միայն ս. Սարգսի դպրոցում ունենալիք չորրորդ բաժանման ծախքի կէսը՝ 450—500 ռուբլի, կը հոգայ ս. Գէորգի դպրոցի հոգաբարձութիւնն առ այն, որ՝ 1) այդ բաժանմունքում գլխաւորապէս աշակերտելու են 1913/1914 ուսմ. տարում ս. Գէորգի դպրոցի երրորդ բաժանմունքից փոխադրուողները, և II՝ երկու դպրոցները դանելով իրար կից Թաղամասերում մինչև զատ զատ նորմալ տիպի չորսամեայ դպրոց ունենալը՝ կարելի կը լինի հիմք դնել դէթ մի այդպէսի չորսամեայ-միդասեան լրիւ դպրոցի։

1914 թւի մայիսի 26-ի նիստին որոշելով երկու դպրոցների դասարանների թիւը՝ հոգաբարձութիւնը յունիսի 2-ին, կրկին խառը ժողովում զբաղւում է երկու դպրոցների դասաբաշխման խնդիրներով։ Ժողովը ի նկատի ունենալով աւագ-ուսուցչի ներկայացրած զեկուցագիրը, հաստատում է դասաբաշխում կատարող մասնաժողովի ներկայացրած ցուցակը ու թեմական իշխանութեան ընդհանուր շրջաբերականի համաձայն՝ մինչև յունիսի 5-ը իւրաքանչիւր դասատուի յայտնի է լինում իր պաշտօնավարութեան մասին 1914—1915 ուսումնական տարւայ ընթացքում։

Օգոստոսի 25-ին, երկու հոգաբարձութիւններն ունենում են նոր ուսումնական տարւայ առաջին խառն նիստը։ Աւագ ուսուցիչը զեկուցում է, որ երկու դպրոցների ուսուցիչներից երեք հոգի՝ պ.պ. Յակ. Մահտեսի-Մկրտչեան, Ռուբէն Մամաջանեան և Մ. Միրզայեան, իբրև պահեստի զինուորներ զէնքի են կանչւել։ Որոշուեց զինուորական ծառայութեան հրաւիրուած երեք ուսուցչի տեղը պահել մինչև նրանց վերադարձը։

Երեք ուսուցչի զէնքի կանչելու հանգամանքը պատճառ է դառնում դասերի նոր դասաբաշխման։ Սեպտեմբերի 2-ին հոգաբարձութիւնների խառն ժողովում քննութեան է առնւում նոր դասաբաշխումը և փոքրիկ փոփոխութիւններով հաստատւում է։

Այս դասաբաշխման մասին էլ օր առաջ յայտնւում է պաշտօնի հրաւիրուող ուսուցիչ-ուսուցչուհիներին՝ տեղեկացնելով նրանց, որ իրենց յաւելեալ դասերը կը մնան իրանց ձեռքին մինչև այն ժամանակ՝ երբ զէնքի կանչւած ուսուցիչները կը վերադառնան դպրոց իրանց պաշտօնին։ Այդ նոր դասաբաշխման համաձայն կազմւում է դասացուցակ և սեպտեմբերի 8-ից սկսւում է ուսումը երկու դպրոցներում, նախորդ օրը աշակերտների ծնողների

բազմութեան ներկայութեամբ կատարելով դպրոցական մաղթանք, իսկ սեպտեմբերի 16-ից ուսման գործը մտնում է իր կանոնաւորընթացքի մէջ։

Բ. դասարանների կազմը

Ամարային արձակուրդներից յետոյ, դեռ օգոստոսի 20-ից երկու դպրոցներում յայտարարւած էր նորեկների ընդունելութիւնը, որ տեւում է մինչև սեպտեմբերի 3-ը։ Սեպտեմբերի երեքին և չորսին տեղի է ունենում նորեկների քննութիւնը։ Թէ այս քննութիւնների, թէ օգոստոսի 29--30-ին տեղի ունեցած վերաքննութիւններից և մայիսեան փոխադրութիւններից պարզւում է դասարանների աշակերտութեան կազմն ու քանակը։

Սեպտեմբերի 5-ին, Մանկավարժական խորհրդի համար պարզւում է, որ ս. Գէորգի դպրոցի I բաժ. ունի 42 աշ. (որից 16 աղջիկ, 26 տղայ), II բաժ. ունի 52 աշ. (որից 18 աղջիկ, 34 տղայ), III բաժ. ունի 36 աշ. (11 աղջիկ, 25 տղայ)։ Այս հաշւով տարւայ սկզբին ընդամենը՝ 120 հոգի։

Սեպտեմբերի 10-ին Մանկավարժական խորհրդի կազմից այդ դասարանների համար ընտրւում են դաստիարակ-դաստիարակչուհիներ։ Աւագ-ուսուցիչը դաստիարակների աջակցութեամբ կազմում է երկու դպրոցների աշակերտութեան ընտանեկան դրութեան վերաբերեալ մանրամասն տեղեկագիր։ Այդ տեղեկագիրներից պարզւում է, որ ամեն մի դասարանի աշակերտութեան երկու երրորդ մասը չքաւոր է բառի բուն նշանակութեամբ, մէկ երրորդ մասը հաղիւ տանելի վիճակ ունին և կան երեխաներ, որոնց հայրերը և կամ եղբայրը զէնքի են կանչւել և ընտանիքը մնացել է անօգնական։ Այդպիսիների թիւը ս. Գէորգի դպրոցում հասնում էր 27-ի։

Վերոյիշեալ բոլոր տեսակների վրայ հիմնւած մանկավարժ. Խորհուրդը պատրաստեց ձրիավարժների ցանկ, որը առաջին կիսամեակում հաստատւեց հոգաբարձութեան կողմից, և ըստ որի ս. Գէորգի դպրոցում սովորում էին 38 ձրիավարժ։ Երբ տարւայ ամբողջ ընթացքում այդ դպրոցի աշակերտութեան թիւը հասաւ 138 հոգու, ձրիավարժների թիւն էլ հասաւ 46 հոգու։

Տարւան տնտեսական անմոլաստ պայմանների պատճառով՝ աշակերտութեան ծնողներից շատերը չը կարողացան լրիւ վճարել նոյնիսկ տարւայ սկզբում խոստացած ուսման վարձը։ Ուսման վարձի դանդաղ և անկանոն գանձելու մասին աւագ ուսուցիչը զեկուցել է հոգաբարձութեանը և ամեն անգամ էլ հոգաբարձութիւնս ծանօթանալով խնդրի հետ, ընդ առաջ է գնացել ծնողների կարիքներին և զիջել է կամ ազատել ուսման վարձից։

Բաւական հետաքրքիր պատկեր է ներկայացնում աշակերտութեան ծնողների թէ տնտեսական կացութիւնը և թէ նրանց զբաղմունքներն ու ունեցած կրթութիւնը որ հետևեալն է.—

Տարեայ ընթացքում ցուցակագրուած 136 աշակերտ - աշակերտուհիներից 3 հոգի որբ են, 17 հոգի ունեն միմիայն մայր, 4 հոգի ունեն միմիայն հայր, 112 հոգի հայր և մայր։ Ծնողներից 4 հոգի երկրագործ են, 48 հոգի արհեստաւոր, 20 հոգի վաճառական, 25 հոգի ծառայողներ, 2 հոգի հոգևորականներ, 17 հոգի անհաստատ պարապմունքի տէր։ Կրթութիւն ունեն 2-ը միջնակարգի չափ, 45 հոգի տարրական դպրոցների երես տեսած, 69 հոգի անգրագէտ։ Ծնողներից երկու երրորդը ապրում են ս. Գէորգի, Մէյդանի, Հրեշտակապետաց և Բեգիսեհեմի թաղերում, մի երրորդը՝ զանազան թաղերից՝ Պեսկի փողոցում, Հաւլաբարում, Զուղուրէթում և մի քանիսն էլ՝ Նախալովկայում։

Աշակերտութեան ծնողների վերոյիշեալ չքաւորութեան պատկերը այդքան պարզ երևալուց յետոյ, Մանկավարժական խորհուրդը չէր կարող անտարբեր մնալ։ Հէնց այդ պատճառով տարեայ սկզբից հոգաբարձութեան և ուսուցչութեան խան ժողովի նիւթ դարձրեց երեխաներից շատ չքաւորներին նախաճաշիկ տալը, որը թէև ընդունուեց միաձայն, սակայն գործադրութիւնը մնաց նիւթական միջոցներ հայթայթելուն։ Զափազանց չքաւոր աշակերտներից 13 հոգի տեղաւորուեցին Բարեգործական ընկերութեան և քաղաքային ձրի ճաշարաններում, 12 հոգի ստացան ուսման պիտոյքներ ձրիապէս մինչև տարեայ վերջը, իսկ դեկտեմբերի վերջին՝ աշակերտ-աշակերտուհիներից 38 հոգի՝ նոր հագուստ։

Գ. ուսման գործը

Ուսման գործը դեկավարելու համար Մանկավարժական խորհուրդը, որ բաղկացած է եղել 13 անդամից, ունեցել է 20 նիստ։ Այդ նիստերը նուիրուած են եղել ուսման գործին յաջող ընթացք տալուն։ Բացի այն, որ իւրաքանչիւր ուսուցիչ ուսուցչուհի բարեխղճութեամբ առաջ է տարել իր ստանձնած առարկաները, այլև մասնակցել է դպրոցի ներքին կեանքի հետ առընչութիւն ունեցող զբաղմունքներին։ Ուսման գործի յաջողութեանը մեծապէս նպաստել են 1) պարտադիր ընթերցանութեան դասերը, 3) բացօթեայ զբաղմունքները, 3) կրթական նպատակով կազմուած փոքրիկ էքսկուրսիաները։ Լեզուներից ու թուաբանութիւնից շա-

բաթական առնուազն 2 անգամ եղել է դասարանական գրաւոր։

Մանկավարժական խորհուրդը իր նիստերին զբաղուել է առաւելապէս և՝ դպրոցական կարգ ու կանոնին վերաբերեալ խնդիրների մշակութեամբ։ Ուսման գործի դեկավարն է եղել Մանկավարժական Խորհուրդը, նրա ներկայացուցիչն է եղել աւագ ուսուցիչը, որը հսկել է երկու դպրոցներին օրական դասաւանդելով 2—3 դաս, ազատ մնացած ժամերին լսել է իր խմբի անդամների դասերը. հսկել է որ ի կատար ածուն Մանկ. Խորհրդի որոշումները։

Ս. Գէորգի դպրոցում նա լսել է՝ 15 դաս առաջին երկամսեակում, 16 դաս երկրորդ երկամսեակում, 18 դաս երրորդ երկամսեակում և 11 դաս չորրորդ երկամսեակում, ընդամենը՝ 60 դաս։ Այս դասերի մասին եղած դիտողութիւնները՝ կանխապէս յայտնելով դասատուին՝ արձանագրուած են օրագրամատեաններում։

Այստեղ աւելորդ չենք համարում առաջ բերել թեմական տեսուչ պ. Ս. Տէր-Աւետիքեանի ընդհանուր դիտողութիւնները ուսման գործի և կարգապահութեան վերաբերեալ, որ նա արել է իր այցելութեան միջոցին չորս օր դասեր լսելուց յետոյ.—

«Լսածս բոլոր դասատուների բանաւոր դասերն ու տեսածս բոլոր գրաւոր աշխատանքները ցոյց տուին, որ երկու դպրոցներում պաշտօնավարող ուսուցիչ-ուսուցչուհիները կանգնած են իրենց կոչման բարձրութեան վրայ. նրանք բոլորը իրենց աչալուրջ հսկողութեամբ և ջանքերով դպրոցի ուսման գործը դեկավարում են դէպի դեղեցիկն ու ցանկալին։ Յատուկ, աչքի ընկնող թերութիւն չը կայ՝ ոչ մի դասատուի մէջ. ընդհակառակը, սկսնակ վարժուհիները մի կամ երկու տարի առաջ եկել են այս դպրոցները և աւագ-ուսուցչի ու իրեն ընկերակից ուսուցիչ-ուսուցչուհիների խորհուրդներով այսօր ներկայանում են լաւ դասախօսներ։ Առանձնապէս գնահատելի են ուսուցչական խմբի սերտ համերաշխութիւնը, նրա սրտացաւ վերաբերմունքը դէպի իր դասախարակչական խնամքին յանձնուած մանուկները ու աւագ ուսուցչի ընկերական վերաբերմունքը դէպի իր աշխատակից ուսուցչուհիներն ու ուսուցիչները։

«Գալով կարգապահութեան, որի մասին ասացի, որ արտադպրոցական անմխիթար պայմանները որոշ չափով ազդեցութիւն են ունեցել մի երկու դասարանի աշակերտութեան վրայ, բայց դրանք անցողական են։ Այդ դասարանների աշակերտները, իբրև առաջին տարին յաճախող աշակերտներ՝ կը շակուին։ Կարգապա-

հութիւնն ընդհանուր առմամբ լաւ է։ Ընդհանուր տպաւորութիւնը մխիթարական է։»

Ուսման գործի յաջողութեան նկատմամբ Մանկ. Խորհուրդը չէ մոռացել ստեղծելու դպրոցի և աշակերտութեան ծնողների մէջ սերտ յարաբերութիւն։ Իւրաքանչիւր երկամսեակի վերջը կազմակերպել է ծնողական դաստիարակչական զրոյցներ, որոնց առանձին զոհունակութեամբ ներկայ են եղել երկու դպրոցի աշակերտութեան ծնողները։ Խօսել են պ. պ։ Յ. Աղաբաբ՝ երկու անգամ Ա. Խնկոյեան և Բ. Բերինեան մէկ-մէկ անգամ։

Դ. Աշակերտութեան առաջադիմութիւնը

Դպրոցներիս ուսման գործն վերոյիշեալ ձևով ամբողջ տարին առաջ է տարել սովորական ընթացքով։ Որքան և 1914|15 ուսումնական տարին ունեցել է աննորմալ անցուդարձ, բայց այդ բանը զգալիօրէն չէ խանգարել դպրոցիս աշակերտութեան առաջադիմութիւնը։

Մանկավարժական Խորհուրդը, իւրաքանչիւր երկամսեակից յետոյ՝ թէ բանաւոր և թէ գրաւոր տեղեկութիւններ է տուել թոյլ աշակերտների ծնողներին՝ հոգալու իրենց զաւակների պակասութիւնները, դասատու ուսուցիչ-ուսուցչուհիներն Մանկ. Խորհրդի որոշմամբ՝ պարտաւորուել են յատուկ ուշադրութեան տակ առնել թոյլերին, որպէս զի նրանք հետզհետէ ուղղուեն։

Այդ օրինակ հետևողութիւնն ունեցել է իր բարերար ազդեցութիւնը։ Տարեայ վերջը, I. դաս. եղած 36 հոգուց փոխադրուել են II. դասարանը 25 հոգի, մնացել են 11 հոգի։ II. դաս. եղած 46 հոգուց փոխադրուել են III. դասարանը 30 հոգի, մնացել են 16 հոգի։ III. դաս. եղած 34 հոգուց փոխադրուել են IV. դասարանը 25 հոգի, մնացել են 9 հոգի։ IV. դաս. եղած 31 հոգուց ստացել են աւարտական վկայական 26 հոգի, մնացել են 5 հոգի։ (փոխադրուողների թիւի մէջ հաշուած են II.-ից 7 հոգի, վերաքննութեամբ փոխադրուած, III.-ից 5 հոգի և IV.-ից 5 հոգի)։

Աւարտող աշակերտ-աշակերտուհիներից շատերը օգոստոսին քննութիւն տալով՝ ընդունուել են Ներսիսեան, Յովհաննեան և կար ու ձեի դպրոցները։

Այս ուսումնական թուին դասատու ուսուցիչ-ուսուցչուհիները պարապել են բարեխղճութեամբ։ Նրանք առաւել կամ նուազ չա-

փով, բացի իրենց անմիջական պարտականութիւնից, դպրոցի օգտին ցոյց են տուել իրենց աջակցութիւնը։

Սոյն զեկուցումն իր մանրամասնութեամբ կարդացուել է հոգաբարձական մարմինների խառն ժողովում և հաստատուել է յատուկ արձանագրութեամբ։

Աւագ-ուսուցիչ՝ Յակ. Աղաբաբ

ՏԵՂԵԿԱԳԻՐ 1915 ԹՎԻ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ

Հոգաբարձութիւնս 1915 թվի ընթացքում ևս իր ոյժերը ներածին չափ աշխատել է Կաթուղիկէ ս. Աստուածածին եկեղեցու բարեգործութեան և նրա ծխական դպրոցի առաջադիմութեան համար։

Մինչև հոկտեմբեր հոգաբարձութեան բոլոր նիստերը գումարել են լրիւ կազմով. այնուհետև՝ իշխան Սարգիս Արղութեան—Երկայնաբազուկը հրաւիրելով զինուորական ծառայութեան՝ հոգաբարձութեան նախագահութիւնը կատարել են հերթով միւս անդամները։

Իշխան Ս. Արղութեան-Երկայնաբազուկի բացակայութիւնը Հոգաբարձութեանս կազմից՝ ընդունուեց յարգելի, մանաւանդ որ իշխանը սիրելով իր ծխ. եկեղեցին ու դպրոցը երբեմն Թիֆլիս գալով միշտ այցելում ու հետաքրքրում էր հոգաբարձութեանս գործերով։ Եւ այդպէս իշխան Սարգիս Արղութեան-Երկայնաբազուկը պաշտօնապէս մնալով Հոգաբարձութեանս կազմի մէջ՝ հաժարւել է անդամ մինչև օրս։

1915 թվի ընթացքում Հոգաբարձութիւնս ունեցել է 22 նիստ եկեղեցուն և դպրոցին վերաբերեալ խնդիրների համար. իսկ 1915/16 ուսումնական տարում ս. Սարգսի հոգաբարձութեան հետ ունեցել է 17 նիստ՝ երկու դպրոցների ընդհանուր գործերի վերաբերեալ, 1916 թվի յունուարից մինչև օրս էլ՝ ունեցել է 8 նիստ։

1916 թվի յունուարի երկրորդ կիսից Հոգաբարձութեանս անդամ իշխան Միքայէլ Թումանեանը գրաւոր յայտնում է Հոգաբարձութեանս, որ ինքը զբաղած լինելով իր ծառայութեան գործերով՝ չի կարող յաճախել հոգաբարձական ժողովներին կանոնաւոր կերպով և իբրև հոգաբարձու կատարել իր վրայ դրուած պարտականութիւնները, ուստի՝ հակառակ իր ցանկութեան ստիպուած է հրաժարուել Հոգաբարձութիւնից։

Նոյն թվի փետրուարի վերջը Հոգաբարձու պ. Միքայէլ Կամսարակեանն ևս զիմում է Հոգաբարձութեանս, որ պաշտօնով տեղափոխուելով Թիֆլիսից—Երևան, հրաժարւում է հոգաբարձակոն պաշտօնից»։

Միմեանց յետևից տեղի ունեցած Հոգաբարձութեանս երկու անդամների անակնկալ հրաժարականները՝ թէև զգալի եղան մնացած երկու անդամների համար, սակայն պատճառ չդարձան ընթացիկ գործերի խանգարման։ Ծխական նոր կանոնադրութեան համաձայն՝ եկեղեցական խնդիրների ժամանակ հոգաբարձական ժողովներին մասնակցութեան հրաւիրուեց, ձայնի իրաւունքով, մեր եկեղեցու աւագ երեցը։ Այսպէս ահա՝ 1916 թվի սկզբներից սկսած կառավարուել են եկեղեցու գործերը։ Այժմ, հոգաբարձութիւնս, հոգաբարձական նոր կազմ ընտրելու խնդիրն է դնում ներկայ ծխական ժողովի առաջ։

1. Եկեղեցին 1915 թվին

Հոգաբարձութիւնս 1915 թվի ընթացքումն ևս իր ոյժերը ներածին չափ լուրջ հսկողութեամբ է վերաբերուել թէ Կաթուղիկէ Ս. Աստուածածին եկեղեցու մուտք ու ելքին, թէ եկեղեցապատկան բնակարաններից ստացուող վարձագներին և թէ, որ գլխաւորն է՝ Բայազետից յետ ստացած գումարի շահեցման ու եկեղեցու ներսի և դրսի վերանորոգութեան խնդիրներին։

1.— Պէտք է ասած, որ եկեղեցու եկամուտը շնորհիւ մասնաւորապէս երէցփոխանի և ընդհանրապէս հոգաբարձութեանս վերահսկողութեան՝ 1915 թվին աւելացել է նախորդ 1914 թվի եկամուտից։ Այդ աւելացումը նկատելի է նոյն իսկ ամսէ ամիս։

Հոգաբարձութեանս պաշտօնավարութեան առաջին՝ 1913 թվին եկեղեցու ընդհանուր եկամուտը եղել է՝ 7852 ռ. 77 կ., երկրորդ տարում՝ 1914 թվին եղել է՝ 8657 ռ. 09 կ., երրորդ տարում՝ 1915 թվին՝ 11,407 ռ. 50 կ.։

2.— Առանձին ուշադրութեան արժանի է եկեղեցու 1915 թվի տօնական շաբաթուայ եկամուտը։ Այդ տօնին ևս Հոգաբարձութիւնս, նախորդ տարիների օրինակով յատուկ մասնաժողովի վերահսկողութեան տակ է պահել թէ եկեղեցու մոմավաճառութիւնը և թէ եկամտային միւս աղբիւրները։ Հետևանքը եղել է այն, որ եկեղեցին իր տօնի շաբթում աւել է մոմավաճառութիւնից՝ ամբողջ մոմից՝ 5648 ռ. 49 կ., կիսայրեալ մոմից՝ 720 ռ. 63 կ., մոթթիներից՝ 124 ռ. 70 կ., գանձանակ՝ 92 ռ. 32 կ., ուխտաւորներից (տարբա) 139 ռուբլի։

3.— Հոգաբարձութիւնս ժամանակի հանգամանքների համաձայն՝ ուշադրութեան տակ է առել նաև եկեղեցապատկան բնակարանները։ Հնարաւորութեան սահմաններում կատարել է թէ անհրաժեշտ վերանորոգութիւններ տանիքների և սենեակների

ներքին յարմարութիւնների և թէ հիմովին կառուցել է նոր մատաղատուն և նրան կից շէնքը։ Վերջին նոր շինութիւնները կատարել են առանց նախահաշիվի, որովհետև սանիտարական տեսակէտից նրանք վտանգած էին ու կարևոր, որի դիմաց հոգաբարձութիւնս լաւ համարեց՝ զանազան տուգանքներից խուսափելու համար՝ միանգամ ընդմիշտ վերջ տալ կարկատաններին ու կառուցել հիմովին նորը. Պէտք է նկատել, որ 1915 թւի ընթացքում Հոգաբարձութիւնս անտեղի է գտել բնակարանների վարձակները նորից սելացնելու, մանաւանդ որ այդ օրինակ աւելացումները կապած են խոշոր վերանորոգութիւնների հետ, որոնց կատարելը՝ սաստիկ թանգութեան պատճառով՝ անժամանակ են համարել։

4.— Հոգաբարձութիւնս տիկին Շուշանիկ Բայեանդուրեանից յետ ստացած գումարների մասին՝ պատիւ ունի յայտնելու ծխական յարգելի ժողովին հետևեալ մանրամասները։

ա) Վրաստանի և Իմերեթի հայոց կոնսիստորիայից Հոգաբարձութիւնս ստացել է № 780 գրութիւնը, որ է՝— «Կոնսիստորիայս № 52/1902 թւի գործերից, որ կազմած է եկեղեցոյդ նախկին երեսփոխան Գրիգոր Բայեանդուրեանից (այժմ հանգուցեալ) եկեղեցու դրամները պահանջելու մասին, երևում է, որ հանգուցելոյ կին Շուշանիկ նոյն և Սուսաննա Բայեանդուրեանցի հետ համաձայնութեան գալուց յետոյ՝ պահանջի գործը հաշտութեամբ վերջացնելու վերաբերմամբ, թեմիս գերապատիւ Սրբազան Առաջնորդը իր 1914 թւի օգոստոսի № 1185 առաջադրութեամբ գրում է այսպէս. «Ուղարկում եմ սորա հետ տիկին Բայեանդուրեանի կողմից նրա հանգուցեալ ամուսնու Կաթողիկէ ս. Աստուածածին եկեղեցուն պարտքի կատարեալ հաստատման ներկայացրած՝ 1) չորսհազար ռուբլի կանխիկ դրամ. 2) Տրփխիս քաղաքի Վարկի Ընկերութեան 4 հատ միհազար ռուբլիանոց № 21147, № 21148, № 21149 և № 21150—ընդամենը՝ 4000 ռուբլու օբլիգացիաներ» 1915 թւի յունուարի 1-ից մինչև 1923 թ. յուլիսի 1-ի 18ական կտրոններով. 3) Նաշխիրա հանքագործական ընկերութեան № № 2150, 2151, 2152, 2153, 2154 և 2482 ընդամենը՝ 3000 ռուբլու ակցիաներ առանց կտրոնների և 4) մի հատ ստացական՝ տիկին Բայեանդուրեանի կողմից՝ մնացած պարտքը լրացնելու համար։ Ցիշեալ 4000 ռ. կանխիկ դրամից վճարած է կոնսիստորիային 1914 թւի դեկտեմբերի 17-ի օրագրով իբրև վարձատրութիւն Ամիրխանեան և Սպենդիարեանց փաստաբան-

ներին դատաստանատներումը դատը վարելու համար 600 ռ. իսկ մնացեալը զտնում է Տփխիսի Առեւտրական դրամատանը ընթացիկ հաշուով։ Տիկին Բայեանդուրեանցը յիշեալ 4000 ռ. օբլիգացիաները ներկայացրել է 3600 ռ. դիմաց և ստորագրութեամբ պարտաւորուել է այդ օբլիգացիաները հաշուել իր կուրսով այն դէպքում, երբ պատերազմի պատճառով փակուած բորսան կը բացուի։ Այդ օբլիգացիաներից ստացուած է տոկոս 93 ռ. որը գտնուում է ատեանումս և կը յանձնուի հոգաբարձութեանդ։ Այժմ որովհետև բորսան բացուած է, ուստի՝ կոնսիստորիայս ուղարկելով տիկին Բայեանդուրեանի ստորագրութեան պատճէնը՝ պատուիրում է հոգաբարձութեանդ հաշուել տիկնոջ հետ ներկայ կուրսով օբլիգացիաները և ընդունելով 3600 ռ. դիմաց, մնացածը ստանալ կամ կանխիկ դրամով և կամ մուրհակով ըստ հայեցողութեան հոգաբարձութեանդ։ Կոնսիստորիայս ընդ սին յարակցում է թէ՝ ատեանս թէև դիմեց տիկին Բայեանդուրեանցին պատուիրելով ներկայանալ ատեան և հաշուել կուրսով օբլիգացիաները, բայց նա մինչև այժմ չէ ներկայացել»։

բ) Ցիշեալ գումարներն ու արժէքաւոր թղթերը թէ ինչու յետ ստացման օրից Հոգաբարձութեանս ձեռքը չանցան՝ պէտք է ասել, որ դրա պատճառն եղաւ յայտարարած պատերազմի անցն ու դարձը։ Թէ այդ օրուան և թէ այնուհետև տեղի ունեցող այս ու այն կարծիքները ժամանակների նկատմամբ՝ առաջնորդարանում ս, առաջնորդի նախագահութեամբ եղած ժողովին Հոգաբարձութեանս հասցրին այն եզրակացութեան, որ մինչև խաղաղութիւն մեր այդ եկեղեցապատկան դրամներն ու թղթերը պահուին ժամանակաւորապէս կոնսիստորիայի միջոցով, իբրև պաշտօնական ապահով տեղում։

Այնուհետև, մօտ մէկուկէս տարի անցնելուց յետոյ, երբ Կովկասի կեանքը բաւարարչափ խաղաղուեց, հոգաբարձութիւնս դիմեց հոգևոր իշխանութեանը, որ ծխական կանոնագրութեան և փոխարքայի ժամանակաւոր կանոնների համաձայն՝ եկեղեցիների անշարժ ու շարժական գոյքի տէրն ու տնօրէնը համարւում է ծխական հոգաբարձութիւնը,—ուստի օրինական է համարում, որ Բայեանդուրեանի այրուց ստացուած գումարներն ու թղթերը կամ յանձնուի հոգաբարձութեանս բանկ դնելու և կամ կոնսիստորիան ինքը բանկը դնի Կաթողիկէ ս. Աստուածածին եկեղեցու անունով և ոչ կոնսիստորիայի գումարների հետ միատեղ, որպէս զի հնարաւոր լինի այդ գումարը մուծել մեր եկեղեցու մոտից մատեանում։

Հոգևոր իշխանութիւնը վերջիվերջոյ յարգեց հոգաբարձութեանս այդ ուղղութեամբ արած մի քանի անգամայ դիմումներն ու այս տարի մեր եկեղեցու անունով գնեց Զինտրական փոխառութեան $5^1/_2$ տոկոսանոց թղթեր՝ I-ին սերիայից մէկ հատ՝ 50 ռուբ.—№ 332242, վեց հատ՝ 100 ռուբ. №№ 389503, 389504, 389505, 389506, 389507, 389508 և II սերիայից երեք հատ՝ 1000 ռուբ. №№ 97354, 97355, 97356։

դ.— Բացի կոնսիստորիայի դիմումից, հոգաբարձութիւնն ևս առիթ է ունեցել թէ իր անդամ-երեցփոխ Գ. Աբուլեանի միջոցով և թէ պաշտօնական գրութեամբ դիմել տիկին Շուշանիկ Բայեանդուրեանին, որ ինքը 4000 ռ. օբլիգացիաները ներկայացրել է 3600 ռուբլու դիմաց և ստորագրութեամբ պարտաւորւել է այդ օբլիգացիաները հաշուել իւր կուրսով այն դէպքում, երբ պատերազմի պատճառով փակւած բորսան կը բացւի։ Յիշեցնելով այս ամենը յարգելի տիկնոջը, հոգաբարձութիւնս խնդրել է նրան թէ քանի որ այժմ բորսան բացւած է՝ բարեհաճի կատարել իր ստորագրութեամբ խոստացածը։ Սակայն մինչև օրս դեռ չէ կատարւել այդ խոստումը։ Հոգաբարձութիւնս միանգամայն վստահ է, որ յարգելի տիկինը մօտ ապագայում կը կատարի իր տւած խօսքը։

5.— Գալով եկեղ. վերաշինութեան խնդրին, պէտք է ասել, որ թէև պատերազմի սկզբից օր-օրի վրայ կրկնապատկւել են շինարարական բոլոր նիւթերի արժէքը, բայց և այնպէս հոգաբարձութիւնս անհրաժեշտ է համարել վերաշինութեան խնդրով ևս զբաղւելու։ Այդ առթիւ խորհրդակցելով մի քանի անգամ հոգևոր իշխանութեան հետ՝ վերջիվերջոյ դիմել է որոշ միջոցների.— հրաւիրելով եկեղեցուս ծխական՝ նկարիչ պ. Գ. Բաշինջաղեանին ու ճարտարապետ պ. Տէր-Սարգսեանին՝ եկեղեցու միաբաններ Ս. ա. ք. Սամուէլեանի և Ա. ք. Թէմուրազեանի մասնակցութեամբ կազմել է խորհրդակցութիւններ և մտքերի երկար փոխանակութիւններից յետոյ՝ յանգել է այն եզրակացութեան, որ եկեղեցին թէ ներսից և թէ դրսից կարևոր է վերանորոգել։ Արդէն սկսւած են նախագծի և նախահաշուի աշխատանքները, որոնց մասին հոգաբարձութիւնս կը տայ յարգելի ժողովիդ կարևոր մանրամասնութիւններ։

Հոգաբարձութիւն

ԴՊՐՈՑԸ 1915/1916 ՈՒՍ. Թ.

Երկու դպրոցների 1915/16 ուս. թւի վերաբերեալ աւագուսուցչի ներկայացրած տարեկան զեկուցագրից հոգաբարձութիւնս քաղւածօրէն առաջ է բերում այստեղ այն մասերը, որոնք վերաբերում են յատկապէս Կաթուղիկէ ս. Աստուածածնի եկ. ծխ. դպրոցի ուսման ու առաջադիմութեան գործին։

I Սկզբնաւորութիւնը

1915/1916 ուս. տարւայ դպրոցական գործի հիմքը դրւեց 1915 թւի մայիսի 28-ին կայացած երկու հոգաբարձութիւնների միացեալ նիստին։ Իւրաքանչիւր հոգաբարձութիւն հիմնւելով իր եկեղեցական-դպրոցական նիւթական միջոցների վրայ՝ յայտնեցին որոշումը։ Այդ որոշումների ընդունելութիւնից յետոյ պարզւեց, որ մեր հոգաբարձութիւնը կարող է հոգալ երեք և կէս դասարանի ծախք, իսկ ս. Սարգսի հոգաբարձութիւնը՝ երկուս ու կէս դասարանի ծախք։ Երկուսը միասին կարող են հոգալ 6 դասարանի ծախք։

Այդ որոշման հիման վրայ՝ ի նկատի ունենալով երկու դպրոցների դասարանների յարմարութիւնները՝ մեր դպրոցում կը պահւեն I, II և IV բաժանմունքները, ս. Սարգսի դպրոցում՝ բացի I և II բաժանմունքից նաև III բաժանմունքը։ Երրորդ բաժանմունքի ծախքի կէսը կը հոգայ մեր հոգաբարձութիւնն առ այն, որ այդ բաժանմունքի աշակերտութեան մեծ մասը կազմում են մեր դպրոցի երկրորդից—երրորդ փոխադրւողները։ Չորրորդ բաժանմունքը մեր դպրոցում պահելու որոշումն եղաւ նախ՝ դասարանի յարմարութեան պատճառով, երկրորդ՝ որ չորրորդի աշակերտութիւնը մեր անցեալ տարւայ III-ից փոխադրւողներն են և երրորդ, որ չորրորդը լինելով մեր դպրոցում, իբրև աւելի կենտրոն տեղում, կը հաւաքւի թւով աւելի աշակերտութիւն։

Նոյն թւի յունիսի 1-ի հոգաբարձական միացեալ ժողովին՝ քննութեան առնելով մանաժողովի ներկայացրած դասաբաշխումը՝ յարմար է համարւում յայտնելու ուսուցիչ-ուսուցչուհիներին, որ 1915/16 ուս. տ. իւրաքանչիւր դասատու առ այժմ կունենայ իր ունեցած դասերի թւով դասեր։ Օգոստոսի վերջերին, երբ հոգաբարձութեան համար կը պարզւի մեր դպրոցներից ինքնակամ պաշտօն թողնող դասատուների ազատ մնացած դասերի քանակը, այդ դասերն ևս կը բաժանւեն մեր ուսուցիչ-ուսուցչուհիների մէջ, որպէսզի նրանք թւով աւելի դասերով կապւած լինեն մեր երկու դպրոցների հետ։ Հէնց այդպէս էլ, օգոստոսի 27-ին տեղի է ու-

նենում հոգաբարձութիւններիդ առաջին նիստը, ուր բաժանուում է նաև ազատ մնացած դասերը մեր ուսուցչութեան վրայ, և միայն երկու դպրոցների երգեցողութեան դասերի համար որոշում է հրաւիրել մի մասնագէտ ուսուցիչ. յաջորդ նիստերից մէկում այդ պաշտօնի համար հրաւիրուում է պ. Դանիէլ Ղազարեանը։

II Դասարանների կազմը

Օգոստոսի 20-ից երկու դպրոցներում յայտարարուած էր նորեկների ընդունելութիւն, որ տեւեց մինչև սեպտեմբերի 4 ը։ Սակայն այդ օրերին թեմական իշխանութիւնից ստացուելով գրաւոր շրջաբերական փախստական երեխաներին յատուկ զիջումներով տեղ տալու համապատասխան դասարաններում, որոշուեց ընդունելութիւնը շարունակել մինչև սեպ. 8-ը, իսկ ուսումը սկսել սեպ. 9-ից՝ նախապէս կատարելով դպրոցական մաղթանք։

Ընդունելութեան վերջը պարզուեց, որ փոխադրուող, վերաքնութիւն տուող և նոր ընդունուողներից կազմուել է ամեն մի դասարանում նորմայից բարձր աշակերտութեան քանակ։ Օրինակ.—

Դպրոցի I բաժ. տեղ են գտել 55 հ. $6^1/_2$—9 տ., որից 15 աղջ. 40 տղ.
II » » » 54 » 9—11 » » 22 » 42 »
IV » » » 60 » $11^1/_2$—13 » 10 » 50 »

Ընդամենը 169 հոգի, որից 47 աղջիկ, 122 տղայ. իսկ ս. Սարգսի դպրոցում՝ 164 հոգի, որից 66 աղջիկ, 98 տղայ։ Երկու դպրոցներումս միասին 333 հոգի, որից 113 աղ. 220 տղ.։

Մանկավարժական խորհուրդը ոգևորուած այս տարուան աշակերտութեան քանակով ամեն կերպ աշխատում էր դասարանական այդ աննօրմալ պայմաններում՝ պարապմունքները հնարաւորութեան սահմաններում մօտեցնել իր կանոնաւոր ընթացքին, իսկ Հոգաբարձութիւնը մտածում էր երկուստեք ոյժերի աշխատակցութեամբ աշակերտութեան չքաւորներին ազատել ուսումնավարձից և իրագործել իր անցեալ տարուան նախագիծը նախաճաշ տալու վերաբերմամբ։

Ստատիստիկական տեղեկութիւններից պարզուում է նախ որ՝ մեր աշակերտութեան մեծ մասը՝ ապրում են Մէյդանի, Հրեշտակապետաց և Բէդլեհեմի շրջակայ քուս. մի մասը Մողնու, Պեսէի և Մհաեբի թաղամասերում, մի մասն էլ՝ ս. Սարգսի՝ Հաւլաբարի թաղերում, մօտ տասը հոգի էլ գալիս են Կուկիայից և Դիդուբէ—Նախալովկայից. երկրորդ, որ ընդունուած փախստական երեխաներից մեծ մասը պարսկաստանցի են, փոքր մասը՝ տաճկաստանցի, երրորդ, որ դպրոցներիս աշակերտութեան ծնող-

ներից խոշորագոյն մասը՝ բանուորներ, արհեստաւորներ և ծառայողներ են և չորրորդ, որ այդ ծնողներից շատ-շատերը անպրագէտ են ու անուս, որպիսի հանգամանք անպայման մեծ ազդեցութիւն է ունենում աշակերտութեան յառաջադիմութեան վրայ։

III. Ուսման գործը

Ուսման գործը դասարանական կազմի աննպաստ հանգամանքների նկատմամբ թէև թուում էր թէ 15/16 ուս. թ. պէտք է ունենայ անյաջող ընթացք, սակայն շնորհիւ մասնաւորապէս դասատու ուսուցիչ-ուսուցչուհիների բարեխիղճ աշխատանքների և ընդհանրապէս Մանկավարժ. խորհրդի 20 ժողովներում խորհած և ձեռք առած միջոցների՝ ունեցաւ գոհացուցիչ արդիւնք։ Ցիշատակենք այն փաստերը, որոնք ընդգծում են մեր ասածները.—

ա.—Երկրորդ կիսամեակի սկզբներին թեմական տեսուչ պ. Ս. Տէր-Աւետիքեանի չորս օրւայ կատարած այցելութիւններն յանգան այն եզրակացութեան, որ «երկու դպրոցների ուսման գործի ընդհանուր վիճակը գոհացուցիչ է և որ հոգաբարձութիւնները, աւագ-ուսուցիչը և ուսուցչական կազմը կանգնած են իրենց կոչման բարձրութեան վրայ։ Երկու դպրոցները լաւ ապագայ ունին, որը տարէցտարի պէտք է աւելի ու աւելի մօտեցնել իրենց բուն նպատակին. այդ լաւ ապագան միացեալ դպրոցի վերցմեայ դարձնելն է և Թիֆլիսի այս թաղամասերում այդ դպրոցը պէտք է վաղ-ուշ դառնայ վերցամեայ»։

բ.—Հոգաբարձութեանս ընդհանուր վերահսկողութիւնը մի կողմից, մեր դպրոցում՝ երեցփոխ պ. Ա. Աբուլեանի յաճախակի դասերին ներկայ լինելը միւս կողմից՝ ապիթ են տուել Հոգաբարձական ժողովներում առաւել կամ նուազ չափով արտայայտուելու, որ մեր դպրոցների ուսման գործը իր պայմանների նկատմամբ՝ դարձեալ ընթանում է բաւարար և որ աշակերտութեան մէջ նկատուում է գոհացուցիչ առաջադիմութիւն։

գ.—Աւագ-ուսուցչի, իբրև անմեջական վերահսկողի, տուած զեկուցումները՝ լսած դասերի, ուսուցչութեան աւանդած առարկաների, աշակերտութեան գրաւոր ու բանաւոր աշխատանքների վերաբերմամբ, յաճախ փաստացի աւելներով եղել են այն խնդրի շուրջը, որ դպրոցներիս ուսման գործը ընթանում է ըստ ծրագրի, և դպրոցական կարգ ու կանոնի սահմաններում։ Եւ վերջապէս.—

ե.—Ուսման գործի մէջ աշակերտութեան ցոյց տուած առաջադիմութիւնը, Մանկավարժական խորհրդի որոշմամբ հետեւեալ պատկերն է ներկայացնում.—

I բ.	եղած	49	հոգուց	փոխադրուել են	33	հոգի,	մնացել	16 հոգոի
II բ.	»	49	»	»	32	»	մնաց	8 հ. վերաք. 9 հ.
IV բ.	»	53	»	»	38	»	10	» 5

Այս թուերը, ի նկատի առած դասարանական կազմերի անհաստատ հանգամանքները, ուսման գործի նկատմամբ գոհացուցիչ են

IV. Նախանաւ

Այս տարի դպրոցներիս վարչութիւնը հնարաւորութիւն ունեցաւ իրագործելու իր մտադրութիւնը՝ աշակերտներից չքաւորներին ձրի նախաճաշ տալու վերաբ. և 1915 թուի յունվարից մինչև մայիսի 15-ը, երկու դպրոցներում ձրի նախաճաշ ստացան օրական 82—88 հոգի. ամեն մի դպրոցում 40—44 հոգի։

Հոգաբարձութիւնը և Ուսուցչական խումբը՝ այդ նպատակով դեկտեմբերի 23-ին կազմակերպելով մի ներկայացում, օգուտեց 350 ռուբլի, որով և հիմք դրեց նախաճաշին։ Զեռք բերուեցին անհրաժեշտ պարագաներ և յունուարեան արձակուրդներից յետոյ աշակերտութեանը տրուեց նախաճաշ։

Նախաճաշի համար գործադրող դումարները՝ թէ հոգաբարձական, թէ ուսուցչական խմբի և թէ նախաճաշի համար հրաւիրուած տիկնանց ու օրիորդների ջանքերով՝ հայթայթուեցին բարեգործ անձանց կողմից նուէրներով և ամսավճարներով։ Այսօրինակ նուէրների մէջ յատուկ շնորհակալութեամբ յիշատակելի է «Հորիզոն» թերթի մեծարգոյ խմբագրութիւնից ստացած ապրիլ և մայիս ամիսների 58 ական ռուբլի ամսական նուէրը։

Նախաճաշ տրւում է առայժմ ամեն մէկին՝ մի բաժակ գցովի թէյ, հաց և երբեմն էլ պանիր։ Ամեն մէկի նախաճաշը նստում 5 կոպէկ։ 84 հոգուն օրական 4 ռ. 20 կ. ամսական, 24 օր հաշուած, 100 ռ. 80 կոպէկ։ Մի գումար որ 4 ամիս շարունակ դանձուել է առանց ծանրանալու եկեղեցիների տուած դպրոցական դրամների վրայ։

V. Միացման հետեւանքը:

Կաթուղիկէ ս. Աստուածածին եկ. ծխական դպրոցների մէջ ծրագրային ներքին կապ սահմանելու օրից սկսած՝ մինչև այսօր անցել է ուսումնական երեք տարեշրջան։ Այդ ժամանակամիջոցում թէ ինչ հեռանքի է հասել միացման ներքին նպատակը և

ինչ արդիւնք է ունեցել դպրոցական ընդհանուր գործը,—աւելորդ չեմ համարում, ներկայ երրորդ տարեշրջանի վերջը այս զեկուցման մէջ յիշատակել հետեւեալը։

ա.—Մեր երկու դպրոցները հետզհետէ ունենալով կայուն դասարաններ, տարէց-տարի նւաճել են թւով աւելի աշակերտութիւն։

բ.—Դասարանների յաջորդական բարձրացումը ընդգրկել է ուսումնական գործի նորմալ և ծրագրային կանոնաւոր ընթացք։

գ.—Դասատու ուսուցիչ-ուսուցչուհին իր աւանդած առարկայի շարունակութիւնը հնարաւորութիւն է ունեցել անցնելու յաջորդ դասարաններում և ամբողջացրել է ծրագրի դասընթացքը։

դ.—Մեր դպրոցները տարէց-տարի թւով աւելի աշակերտաշակերտուհիներ են տուել Ներսիսեան, Ցոփանեան և Կարուձևի դպրոցներին։

ե.—Ամեն անգամ մեր դպրոցներն այցելող պաշտօնական անձինք՝ ծանօթանալով մեր մթութեան նպատակի հետ, խրախուսել են դպրոցները հասցնելու վեցամեայ տիպի դպրոցների։

զ.—Հոգաբարձութիւնների և ուսուցչական խմբի միացեալ աշխատանքները ստեղծել են միջոցներ՝ աշակերտութեանը հագուստներ տալու, նախաճաշ հիմնելու և այլ շահաւէտ անհրաժեշտ կարիքները հոգալու։

Ուսման գործին վերաբերող այսօրինակ շահաւէտ հետեւանքների նկատմամբ է, որ ես դատնալով մեծարգոյ Հոգաբարձութեանդ առաջարկում եմ միացեալ ոյժերով հիմք դնել վեց ամեայ դպրոցի, բանալով այս 1916/17 ուս. թուին երկու I բ. երկու II բ., մէկ III բ., մէկ IV բ. և մէկ V բաժ.։

Հոգաբարձական խորհուրդը մայիսի 23-ին իր միացեալ նիստում լսելով աւագ-ուսուցչի այս առաջարկը և քննութեան առնելով իր նիւթական միջոցները որոշեց՝ 1916/1917 ուսմ. թ. Կաթուղիկէ ս. Աստուածածնի դպրոցում բանալ 4 բաժ. ս. Սարգսի դպրոցում՝ 3 բաժանմունք։

Հերթ-նախ.՝ Ա. Արուլեան

Աւագ-Ուսուցիչ՝ Ց. Աղասաք

ՀԱՇԻՒՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐ	Ռուբ.	Կոպ.
Մնացորդ առ 1-ն յունուարի 1914 թ.	265	10
Մոմի վաճառք	4174	96
Մոմ կիսայրեալ	586	26
Բնակարանների վարձ	1831	65
1913 թ. ապառիկ բնակարանավարձ	128	20
Ուխտաւորների բնակար. վարձ (տաբլա)	265	—
Լուսագին, թագ, ջահ.	365	65
Մատաղի մորթիք	90	95
Եկեղեցակ. տուփ, զանձանակ	44	64
Թիֆլիսի II Փոխադ. Վարկի ընկ. ընթացիկ հաշիւ	300	—
Տոկոսներ	36	38
Ջուր	24	—
Նէրներ	130	—
Անակնկալ	1	—
Դպրոց.—		
Թոշակ աշակերտների $10^{13}/_{14}$ թ. ուս. տ.	245	70
» » $19^{14}/_{15}$ ուս. տ.	235	—
Դասագրքեր և ուսումն. պիտոյքներ	273	—
Երեկոյթ և ներկայացում	182	20
Գումար	9222	19

ՀԱՇԻՒՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐ	Ռուբ.	Կոպ.
Մոմ	2061	26
Ընթաց. հաշ. Թիֆլ. II Փոխ. Վ. ընկ.	100	—
Գնահատական տուրք	106	56
Զեմստւային հարկ	22	—
Պետական հարկ	57	96
Ապահովագր. կրակից	27	07
Ապահովագր. խաղ. տոմսի	37	15
Լուսաւորութիւն և վառելիք	96	13
Նորոգութիւն շէնքերի և շաբժ. գոյքի	1059	44
Շարժական գոյք	19	12
Ջուր	89	31
Մանր ծախք	180	71
Անակնկալ	42	39
Խմբապետին	60	—
Գործակալին	40	—
Ռոճիկ եկեղ. սպասաւորներին	977	05
Դպրոց.—		
Ռոճիկ ուսուցիչներին $19^{13}/_{14}$ ուս. տ.	1962	50
» » $19^{14}/_{15}$ » »	1256	60
» բժշկուհուն $19^{13}/_{14}$ » »	75	—
Դասագրքեր և ուսումն. պիտ.	366	39
Մանր ծախք դպրոցի	135	50
Մնացորդ առ 1-ն յունուարի 1915 թ.		
Մոմ . . . . . 129 ռ. 80 կ.		
Կանխիկ . . . . . դրամ 320 ռ. 25 կ.	450	
	9222	19

1913—14

Եկեղեցական գումարներից	2382	94
Թոշակաշակերտներից	551	20
Երեկոյթ, ներկայացում	182	20
Նուէրներ	130	—
	3264	34

ուս. տ.

Ռոճիկ ուսուցիչներին	2562	50
» աւ. ուսուցչութեան	210	—
Ռոճիկ վերակացուհուն	120	—
» բժշկին	100	—
» ծառային	90	84
Վառելիք	25	—
Դիւանական և այլ մանր ծախք	168	—
	3246	34

1914–15

Եկեղեցական գումարներից	3975	61
Թոշակ աշակերտներից	—	—
Երեկոյթ-ներկայացում	350	—
Նուէրներ	—	—
	4791	11

ուս. տ.

Ռոճիկ ուսուցիչներին	2939	08
» աւ. ուսուցչութեան	250	—
» վերակացուհուն	220	—
» ծառային	108	—
Ս. Սարգսի եկ. դպր. Դ. պատ. պանպանութեան ծախքի կէսը	525	—
Եւ նոցա հասանելիքը ներկայացման արդիւնքից	175	—
Աշակերտական նախաճաշիկին	175	—
Դիւանական և այլ մանր ծախք	60	95
Անակնկալ (ուսուցիչներին 1 ամսեայ նպաստ պատեր. և թանկ.	289	08
Վառելիք	49	—
	4791	11

1915–16

Եկեղեցական գումարներից	3454	33
Թոշակ. աշակերտներից	461	50
Երեկոյթ, ներկայացում,	361	90
Նուէրներ.	100	—
	4377	73

ուս. տ.

Ռոճիկ ուսուցիչներին	3019	80
» աւ. ուսուցչին	210	—
» վերակացուհուն	180	—
» ծառային	108	—
Վառելիք	28	—
Դիւանական և այլ մանր ծախք	81	93
Ս. Սարգսի եկ. դպրոցում Դ. բաժ. պանպանութեան ծախքի կէսը	450	—
	4377	73

Մնացորդ առ 1-ն յունուարի 1915 թ. կանխիկ դրամով	320	25
» » » » մոմ	120	80
Ընթացիկ հաշիւ Թիֆլ. II Փոխ. Վ. ընկ.	—	09
Պահեստադրամ (вкладъ) » » №	2000	63
Մոմ վաճառուած	5518	80
» կիսայրեալ	720	60
Տարլա (ուխտաւորներից բնակար. վարձ)	343	70
Լուսագին, թագ, ջահ և այլն	474	32
Մատաղի մորթիք	124	87
Գանձանակ	92	93
Անակնկալ	76	—
Բնակարանի վարձ 1915 թ.	1820	—
» » 1914 թ. ապառիկ	21	—
Յ. Առիւծեանից ապառիկ ստացած (նախկին երիցփոխ)	300	—
Ջուր—վաճառուած	24	—
Տոկոսներ ընթացիկ հաշուով, պահեստադրամ և այլն	387	06
Դպրոց.—		
Թոշակ. աշակերտ. 1914/15 ուս. տ.	226	50
» » 1915/16 »	465	50
Երեկոյթ—ներկայացումներից աշակ. նախաճաշի համար	711	90
Նվէրներ	100	—
Գումար	13858	55

Ընթաց. հաշ. Թիֆլ. II Փոխ. Վ. ընկ. մուծած է	200	—
Պահեստադրամ (вкладъ) » » »	2500	—
» » » » »	300	—
Մոմ գնած	2720	63
Գնահատակ. տուրք (оцѣноч. сборъ)	115	53
Պետական հարկ (госуд. налогъ)	61	28
» » » » հին ապառիկ	60	—
Զեմստուային հարկ	30	64
Ապահովագր. շէնքերի	38	04
» I խաղարկ. մէկ տոմսի	46	75
Լուսաւորութիւն և վառելիք	128	65
Խմբապետին եկեղ. երգեց. խմբի	60	—
Գործակալին	40	—
Մանրածախք	321	59
Անակնկալ	60	—
Նորոգութիւն շէնքերի	993	80
Ջուր	102	44
Ռոճիկ սպասաւորներին	1028	33
Դպրոց.—		
Ռոճիկ ուսուցիչներին 1914/15 ուս. տ.	2213	20
» » 1915/16 ուս. տ.	1156	44
» թեմական տեսչին	60	—
Ցաւելեալ ռոճ. ուսուց. պատեր. և թանկութեան պատճառով	289	08
Աշակ. նախաճաշ	175	—
Գ. բաժ. պահպանութեան ծախքի կէսը Ս. Սարգսի եկ. դպրոցին	458	33
Մանր և դիւանակ. ծախք.	44	—
Ներկայացումից ստացած արդիւնքի կէսը Ս. Սարգսի եկ. դպրոցին	175	—
Մնացորդ առ 1-ն յունու. 1915 կանխիկ դրամով	243	13
» » » » մոմով	174	89
Գումար	13858	55

ԶԵԿՈՒՅՈՒՄ

Կաթուղիկէ ս. Աստուածածին եկեղեցու Վերաստուգիչ Յանձնաժողովի

Գրուած է 1915 թուի սեպտեմբերի 30-ին (ստացուած հոկտ. 1-ին*)

Վերաստուգիչ յանձնաժողովը Կաթուղիկէ ս. Աստուածածին եկեղեցոյ, որ բաղկացած է հետեւեալ անձերից պ. պ. Բարսեղ Իւզբաշեանից, Ռուբէն Թէմուրազեանից և արժ. Յովհաննէս քհյ. Ամիրխանեանից, քննելով 1914 թուի ելեւմտից մատեանը գտաւ, որ այդ թուի փաստաթղթերը համապատասխանում են մատեանին: Բացի մի քանի փաստաթղթերից, որոնք կազմուած էին անկանոն, օրինակ.—

1.— Կային փաստաթղթեր, որոնք չէին ստորագրուած փող ստացողից, օրինակ գրած էր այսպէս. վասն անգրագիտութեան ստորագրեցի: Բայց թէ ո՞վ է այդ անգրագէտը և ո՞վ պէտք է ստանայ փողը յայտնի չէ:

2.— Կար փաստաթուղթ, որի տարեթիւը և ամսաթիւը անյայտ էր:

3.— Նմանապէս զբօսանքից և ներկայացումից՝ ելք ու մուտքի վերաբերմամբ՝ ոչ մի փաստաթուղթ չը կայ:

4.— Հաշէտուութիւնը հաշուապահական ձևով չի լինում: Ցանկալի է, որ հաշուետուութիւնը լինէր օրդերային սիստէմով:

5.— Եկեղեցւոյ տները համեմատաբար բերում են շատ քիչ եկամուտ, որ կարելի է աւելացնել. բայց ցանկալի է տալ կապալով, մշակած յայտնի պայմաններով:

Անդամք Վերաստուգիչ Յանձնաժողովի՝

Բ. Իւզբաշեան
Ռ. Թէմուրազեան
Յով. քհնյ. Ամիրխանեան

Դաւոր.— 1915 թուի յունիսին Հոգաբարձութիւնս յանձնել է 1914 թուի հաշիւները վերաստուգելու, Սեպտեմբերի 19-ին գրաւոր յիշեցրել է վերաստուգիչ յանձնաժողովին, որ հաշիւները վերադարձնեն. յիշեցրել է նոյնպէս սեպ. 22-ին. իվերջոյ հոկտեմբերի 1-ին ստացել են հաշիւները և սոյն զեկուցումը:

1915 թուի հաշիւները վերաստուգելու համար՝ Հոգաբարձութիւնս յանձնաժողովին հրաւիրել է փետրուարին, մարտին յանձնաժողովն եկել, մի երեկոյ զբաղուել է յուն. և փետր. ամ. հաշ. վերաստուգութեամբ: Այնուհետև, ապրիլին նորից յիշեցրել ենք, որ գան վերջացնեն, բայց մինչև օրս չեն եկել:

ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ

Կաթուղիկէ ս. Աստուածածին ծխական եկեղեցու Հոգաբարձութեան

Կարդացուած է 1915 թուի հոկտեմբերի 13-ի № 5 նիստին

Հոգաբարձութիւնս 1915 թուի յունիսին յանձնելով Վերաստուգիչ յանձնաժողովին 1914 թուի մտից և ելից հաշիւներն իրենց փաստաթղթերով վերաստուգելու համար, երկար սպասումներից և մի քանի անգամ բանաւոր ու գրաւոր դիմումներից յետոյ՝ հազիւ հոկտեմբերի 1-ին ստացաւ սոյն զեկուցումը, որ և իր հերթական նիստին քննութեան առնելով՝ հարկ համարեց հետեւեալ բացատրութիւնը տալ՝ այդ զեկուցման մէջ յանձնաժողովի արած դիտողութիւններին.—

1.— Այդ փաստաթղթերը վերաբերում են մանր ծախսերին որոնք կատարւում են ծառաների միջոցով. վերջիններս իբրև անգրագէտ, պատահական գրագէտի ստորագրել են տալիս, այն էլ շատ անգամ՝ ոչ ընդունուած ձևով:

2.— Տարեթիւն ու ամսաթիւը անյայտ այդ մի փաստաթուղթը՝ վերաբերում է գնուած նաւթին, որ մաս-մաս բերուելով խանութպանից՝ ստացական է ստացել խանութպանից մի ամբողջ ամսւայ համար:

3.— Զբօսանքի և ներկայացման ելեւմտից փաստաթղթերը՝ յատուկ հաշէտուութեամբ, ըստ օրէնքի, ներկայացւում են նահանգապետին և հոգաբարձութեան մօտ ոչ մի փաստաթուղթ հեալ չի կարող:

4.— Հաշեմատեանները պահւում են Սինոդից ստացած յատուկ մատեաններով և սահմանուած սիստեմով: Սրանից դուրս այլ հաշուապահական ձևով մատեաններ պահելը՝ կապուած է որոշ ծախքերի հետ (հաշուապահի, դիւանական ծախքերի և այլն):

5.— Բնակարանների վարձագները՝ հոգաբարձութիւնս հնարաւորութեան չափով աշխատել է աւելացնել, օրինակ՝ 1913 թուին ստացել է բնակարանի վարձ՝ 1734 ռ., իսկ 1914 թուին՝ 1852 ռ.: Աւելի բարձր վարձագները կապուած են խոշոր նորոգութիւնների հետ, որ այժմ անժամանակ է: Ինչ վերաբերում է կապալին՝ Հոգաբարձութիւնս դրա վերաբերմամբ հետեւել է ծխական ժողովի որոշմանը՝ տնտեսական ձևով կառավարելու առաւելութեան նկատմամբ:

Անդամք Հոգաբարձութեան՝

Իշխան Մ. Թումանեան
Մ. Կամսարական
Ղ. Արուլեան
Ա. Յովհաննիսեան

Գործավար աւագ-ուսուցիչ՝ Յ. Աղաբաբ

ՄՄ Հայագիտական գրադարան
MAL014738

Համեմատական հաշիւ Կաթուղիկէ ս. Աստ. (ս. Գէորգ) եկ. 1913—1915 թ.

ՄՈՒՏՔ

	1913 թ.		1914 թ.		1915 թ.	
Մոմ վաճառուած	3988	87	4174	96	5518	09
» կիսայրեալ	551	59	586	26	720	63
Տարլա (ուխտ. բնակ. վարձ)	240	80	265	20	343	80
Լուսագին, թագ, ջան . .	474	55	365	65	474	60
Մատաղի մորթիք	116	20	90	95	124	70
Գանձանակ	23	86	44	64	92	32
Բնակարանի վարձ . . .	1734	93	1959	65	1841	93
Ջուր	20	—	24	—	24	—
Տոկոսներ ընթաց. հաշ. պահեստագրաւ և այլն .	76	47	36	38	387	06
Նէրքներ	120	—	—	—	—	—
Անակնկալ	—	—	1	—	76	87
Դպրոց						
Ուս. վարձ աշակերտներից.	505	50	480	70	692	—
Երեկոյթ-ներկայացում . .	—		182	20	711	90
Նէրքներ	—	—	130	—	100	—
Ուսումն. պիտոյքներ և դաղրքեր	—	—	273	—		—
Գումար . .	7852	77	8614	59	11107	90

ԵԼՔ

	1913 թ.		1914 թ.		1915 թ.	
Մոմ գնած	1964	69	2061	26	2720	63
Գնահատ. տուրք (оцѣн. сб.)	96	12	106	56	115	53
Պետական հարկ	45	17	57	36	61	28
Զեմստուային հարկ . . .	25	17	22	—	30	64
Ապահովագր. շէնքերի . .	27	37	27	07	38	04
» I խաղարկ. ժէկ տոմսի	27	35	37	15	46	75
Լուսաւորութիւն և վառելիք	67	99	96	13	128	65
Ռոճիկ գործակալին . .	40	—	40	—	40	—
» եկ. երդ. խմբի խմբապ.	60	—	60	—	60	—
Ռոճիկ սպասաւորների . .	1029	50	977	05	1028	33
Մանր ծախք	148	54	180	71	321	59
Անակնկալ ծախք . . .	150	—	42	29	60	—
Ջուր	77	32	89	31	102	44
Նորոգութիւն շէնքերի . .	681	95	1059	44	993	80
Շարժական գոյք	9	96	19	12		
Դպրոց						
Ռոճիկ ուսուցիչներին . .	2520	—	3219	10	3369	64
» բժշկին	25	—	75	—	—	—
» թեմակ. տեսչին . .	—	—	—	—	60	—
Մանր ծախք	116	79	135	50	44	—
Անակնկալ ծախք . . .	—	—	—	—	289	8
Աշակ. նախաճաշ. . . .	—	—	—	—	175	—
Ս. Սարգսի դպ. I-ին պատ. դասարանի ծախքի կէսը.	—	—	—	—	458	33
Այլ ծախքեր	—	—	—	—	175	—
Ուս. պիտոյք. և դասագրք.			366	39	—	—
Գումար . .	7112	32	8672	14	10318	73